ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Արփինե Սանասարի Հակոբյանի «Ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործման ուղիները կառավարչական հաշվառման համակարգում (ՀՀ առևտրային կազմակերպությունների նյութերով)» թեմայով Ը.00.03. «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը

ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում ֆինանսական տեղեկատվության շրջանակը պայմանավորված է այդ համակարգի ուսումնասիրության օբյեկտով և առարկայով՝ ավանդաբար ընդգրկելով տեղեկություններ եկամուտների, ծախսերի, ծախսումների, ինքնարժեքի, արտադրության միջոցների և գործընթացների մասին: Ընդ որում, հատկանշական է այն հանգամանքը, որ ներկայումս ՀՀ մասնագետների շրջանում գերակայում է կառավարչական հաշվառումն արտադրական հաշվառման հետ նույնացնելու միտումը:

Միաժամանակ, հայտնի է, որ Հաշվապահների միջազգային դաշնության հաստատած ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (ՖՀՄՍ) կիրառվում են հաշվառման բոլոր ենթահամակարգերում (ֆինանսական, կառավարչական և հարկային)՝ համապատասխան տեղեկատվության ապահովման նպատակով: Սակայն, կառավարչական հաշվառման համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման կառուցակարգը պայմանավորված է ծախսերի հաշվառման և ինքնարժեքի հաշվարկման ընտրված մոտեցումներով, որտեղ հատկապես էական դեր ունեն անուղղակի ծախսումների, մասնավորապես՝ դրանց բաշխման առանձնահատկությունների, ազդեցության, ինքնարժեքի ձևավորման և այլնի մասին տեղեկությունները:

Սակայն կառավարչական հաշվառման ոլորտի զարգացման ներկա միտումները նոր պահանջներ են առաջադրում ֆինանսական տեղեկատվության կառավարմանը՝ շեշտադրելով կայուն զարգացման հայեցակարգի դրույթները: Հրապարակվել և 2024 թ. հունվարի 1-ին ուժի մեջ են մտել IFRS-S շարքի ստանդարտները, որոնք ֆինանսական տեղեկատվության կառավարման շրջանակը կապում են կազմակերպության ռիսկերն ու

հնարավորությունները հաշվի առնող ռազմավարության, դրան համապատասխան չափիչների սահմանման և հաշվետվողականության համակարգի ձևավորման հետ: Ուստի անհրաժեշտություն է առաջանում ինչպես ինքնարժեքի, այնպես էլ ողջ կազմակերպության մակարդակով որոշումների կայացմանն աջակցող ցուցանիշների սահմանման և հաշվետվողականության ձևավորման վերաբերյալ մշակել ֆինանսական տեղեկատվության կառավարման կառուցակարգերի կատարելագործման ուղիներ:

Ուստի ակնհայտ է, որ ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում և՛ ավանդական, և՛ կայուն զարգացման հայեցակարգի դրույթներով ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ուղղված հետազոտությունն արդիական է:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակը ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման արդիական հայեցակարգի մշակումն է, որին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ներկայացնել ֆինանսական տեղեկատվության շրջանակը, կառավարման մեխանիզմները, հիմնախնդիրներն ու նպատակադրումները ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում,

2. գործարարության զարգացման ներկա միտումների համատեքստում առաջարկել հետահայաց բնույթ ունեցող տեղեկատվական համակարգից անցում դեպի տեսանելի ապագային ուղղված և կայուն զարգացման նպատակադրումներով ինտեգրված ֆինանսական տեղեկատվական հոսքերի կառավարման համակարգ,

3. մշակել կառավարչական հաշվառման քաղաքականության դրույթներ և առևտրային կազմակերպություններում դրանց ներդրման հնարավոր ուղղություններ,

4. ձևավորվող հաշվապահական ներքին և արտաքին հաշվետվական հոսքերից տարբերակել կառավարչական հաշվառման համակարգում տեղեկատվության հաշվետվական նպատակներն ու ուղղությունները՝ ESG (բնապահպանական, սոցիալական, կառավարչական) հայեցակարգի համատեքստում,

5. կայուն զարգացմանն առնչվող ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (IFRS-S) կարգաբերումներին համապատասխան՝ ներկայացնել

գործունեության հիմնական ցուցանիշներով ռազմավարական նպատակադրումների կատարողականի վերլուծության և գնահատման կառուցակարգ,

6. կայուն զարգացման գործունեության առանցքային ցուցանիշների ներառմամբ առաջարկել ռազմավարական նպատակադրումների կատարողականի համապարփակ գնահատման մոտեցում,

7. մշակել անուղղակի ծախսումների մասին տեղեկատվության կառավարման մեխանիզմ,

8. առաջարկել առևտրային կազմակերպությունների գործարարության կայուն զարգացման մշտադիտարկման ընդհանրացված ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանություն:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը՝ ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգն է, իսկ առարկան՝ այդ համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործման հիմնահարցերն են:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսության գիտական նորույթը կառավարչական հաշվառման համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման կառուցակարգի կատարելագործման ուղղությամբ մոտեցումների ներկայացումն է: Մասնավորապես.

1. մշակվել են կառավարչական հաշվառման քաղաքականության դրույթներ և դրանց ներդրման մոտեցումներ՝ առաջարկելով ավանդական, հետահայաց բնույթ ունեցող տեղեկատվական համակարգից դեպի տեսանելի ապագային ուղղված և կայուն զարգացման նպատակադրումներին ինտեգրված ֆինանսական տեղեկատվական հոսքերի կառավարման համակարգ,

2. կայունությանն առնչվող ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (IFRS-S) նպատակադրումներին համապատասխան՝ մշակվել են կայուն զարգացման կառավարչական հաշվետվողականության մոտեցումներ՝ ներառելով բնապահպանական, սոցիալական և կառավարչական տեղեկատվական

ռազմավարական ինտեգրված հոսքեր, հնարավորություն ստեղծելով վերլուծելու և գնահատելու ESG կատարողականի ցուցանիշները,

3. ներկայացվել է անուղղակի ծախսումների մասին տեղեկատվության կառավարման մեխանիզմ՝ այդ ծախսումների խմբավորման, և ըստ գործառույթի ինքնարժեքին վերագրման արժեհաշվարկի մոտեցմամբ,

4. մշակվել է առևտրային կազմակերպությունների կայուն զարգացման գնահատման մեթոդաբանություն՝ կիրառելով բնապահպանական, սոցիալական և կառավարչական ինտեգրալային ցուցանիշ, որը հնարավորություն է ստեղծում մշտադիտարկելու ESG կատարողականը:

Հետազոտության գիտական արդյունքների հավաստիությունը և գործնական նշանակությունը

Ներկայացված ատենախոսությունը, որպես առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների ներդրման՝ մեթոդական մոտեցումների տեսական և գործնական հետազոտությունների հիման վրա կատարված համալիր ուսումնասիրություն է և ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված առևտրային կազմակերպություններում կառավարչական հաշվառման համակարգի զարգացման նպատակադրումներին և այդ համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման բարելավմանը: Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ առևտրային կազմակերպություններում՝ նպաստելով կռավարչական հաշվառման համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման արդյունավետության բարելավմանը:

Հետազոտության հիմնական արդյունքները լուսաբանված են ատենախոսի թվով 17 գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացության բաժնից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածներից Ներածության բաժնում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը,

ձևակերպվել են հետազոտության նպատակն և խնդիրները, ներկայացվել են հիմնական գիտական արդյունքները և դրանց գործնական նշանակությունը, տրվել են ատենախոսության տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:

Ատենախոսության առաջին՝ **«Ֆինանսական տեղեկատվության կառավարման տեսամեթոդական հիմքերը կառավարչական հաշվառման համակարգում և հիմնախնդիրները ՀՀ առևտրային կազմակերպություններում»** գլխում ուսումնասիրվել են ֆինանսական տեղեկատվության շրջանակը, կառավարման մեխանիզմները և նպատակադրումները, վեր են հանվել այդ տեղեկատվության կառավարման հիմնախնդիրները հաշվառման զարգացման ներկա պայմաններում: Այս գլխում վերլուծվել և քննարկվել են ֆինանսական տեղեկատվության կառավարման մոտեցումները և հիմնախնդիրները ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում:

Երկրորդ՝ **«Ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործման ուղիները ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում»** գլխում միջազգային լավագույն փորձի դիտարկմամբ ատենախոսի կողմից քննարկվել են կառավարչական հաշվառման կարգավորման անհրաժեշտությունը և նպատակադրումները ֆինանսական տեղեկատվության կառավարման բարելավման շրջանակներում, որպես ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմ ներկայացվել են կառավարչական հաշվառման քաղաքականության դրույթներ: Այստեղ նաև անդրադարձ է կատարվել ինքնարժեքի մասին տեղեկատվության բարելավման հիմնահարցերին:

Երրորդ՝ **«Կայուն զարգացման նպատակադրումներով ինտեգրված ֆինանսական տեղեկատվական հոսքերի կառավարման համակարգի կառուցումը»** գլխում հեղինակը ներկայացրել է անուղղակի ծախսումների մասին տեղեկատվության կառավարման մշակված մեխանիզմը: Մանրամասն ներկայացվել են կայուն զարգացման կառավարչական հաշվետվողականության և առևտրային կազմակերպություններում կայուն զարգացման ընդհանրացված ցուցանիշի հաշվարկման առաջարկվող մոտեցումները:

Առաջարկվող ծախսային կրիչների համակարգի կիրառմամբ անուղղակի ծախսումների՝ արժեհաշվարկի օբյեկտներին վերագրումն ապահովում է կիրառվող ավանդական բաշխման բազաներով մոտեցմամբ ստացված արդյունքների

համեմատությամբ՝ արժեհաշվարկի օբյեկտների ինքնարժեքի մասին առավել ճշգրիտ տեղեկատվության ձևավորումը և հատկապես օգտակար է գնագոյացման հետ կապված որոշումները հիմնավորելիս, ինչպես նաև ավելի հստակ պատկերացում է ապահովում գործունեության շահութաբերության մասին:

Մշակված՝ ըստ գործունեության առանցքային ցուցանիշների, ռազմավարության նկարագրության և կատարողականի վրա հիմնված հաշվետվողականությունը թույլ է տալիս կայուն զարգացման նպատակադրումները կապել պատասխանատվության կենտրոնների գործառնական նպատակների հետ՝ ապահովելով սոցիալական, կառավարչական և բնապահպանական ուղղություններով նպատակադրումների մշտադիտարկում: Արդյունքում, կայուն զարգացման համատեքստում առևտրային կազմակերպություններում տեղեկատվական հոսքերի կառավարման առաջարկվող մոտեցումը, հաշվետվողականության և չափելիության համապատասխան գործիքների ներդրումը ապահովում են ESG սկզբունքներով գործարարության ֆինանսական ինտեգրված տեղեկատվական հոսքերի կառավարման փոխակերպում և կառավարչական արդյունավետ որոշումների կայացում՝ անընդհատ զարգացման նպատակադրումներով:

«Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում՝ հաշվի առնելով ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունները, ուսումնասիրություններն ու վերլուծությունները, հեղինակը հանգել է մի շարք եզրակացությունների:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից: Դրանցից նշենք հետևյալները.

1. Աշխատանքի 1.2. ենթագլխում մանրամասն ներկայացված է ESG հայեցակարգի դրույթներին համապատասխան՝ ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությամբ կայուն զարգացման ընդհանրացված ցուցանիշի հաշվարկման տարբեր հեղինակների մոտեցումներ և բանաձևեր (էջ 27-32), որոնք առավել հակիրճ կարելի էր նկարագրել՝ չկորցնելով տեղեկատվական արժեքը:
2. Ֆինանսական տեղեկատվության կառավարման կատարելագործման առաջարկվող մեխանիզմում (էջ 56), կայուն զարգացման նպատակադրումները ֆինանսական տեղեկատվական հոսքերին ինտեգրելու համար դիտարկվում է IFRS-S1 և IFRS-S2 ստանդարտների կիրառումը: Կարծում ենք աշխատանքը

կշահեր, եթե այդ ստանդարտների առավել ընդլայնված նկարագրություն ներառվեր:

3.Նորույթի երկրորդ կետում, ներկայացնելով առաջարկվող հաշվետվողականության առաջին մասի՝ ստորաբաժանումների ռազմավարության փաստաթղթավորման օրինակ, ատենախոսը հինգ ուղղություններով ամփոփել է համապատասխանող ռազմավարական նպատակներ, դրանք բնութագրող ցուցանիշներ և վերջիններիս հաշվարկման մեթոդաբանությունը (էջ 93), սակայն մեր կարծիքով տեղին կլիներ դրանցում նաև սահմանված նպատակներին հասնելու որոշակի ուղիներ մատնանշել:

4. Ատենախոսության երրորդ գլխում ներկայացվում է կայուն զարգացման ընդհանրացված ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանություն, ներառելով գործունեության բնապահպանական, սոցիալական և կառավարչական կողմերը բնութագրող ցուցանիշներ, սակայն բնապահպանական ուղղությամբ ցանկալի կլիներ ներառել ոչ միայն այդ գծով ծախսերի կատարման մասին, այլ նաև ոչ ֆինանսական տեղեկատվության համադրմամբ տվյալներ (օրինակ ջերմոցային գազերի արտանետումների ինտենսիվության, օգտագործվող ջրի և էներգիայի սպառման արդյունավետության, թափոնների վերամշակման կամ նվազեցման ցուցանիշների մասին), քանի որ դա չի հակասում նաև ատենախոսի կողմից կառավարչական հաշվառման համակարգում ներառվող տեղեկատվության ընկալմանը:

5. Հավելվածներ 1.1.1.-ում, 1.1.2.–ում (էջ 126-134) չափազանց մանրամասնությամբ ներկայացված է կառավարչական հաշվառմանը վերաբերող տեսական հիմնադրույթներ, ինչպես նաև համաշխարհային պրակտիկայում և ՀՀ-ում զարգացման պարբերականացումը, տպավորություն ստեղծելով, որ աշխատանքն ուղղված է կառավարչական հաշվառմանը և ոչ թե այդ համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված ատենախոսությունը ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է, որտեղ առաջադրված և լուծված են ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում ֆինանսական տեղեկատվության

կառավարման մեխանիզմների կատարելագործման տեսական և գործնական մի շարք հիմնախնդիրներ:

Սեղմագիրը կազմված է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներին համապատասխան, համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, իսկ հիմնական դրույթները հրապարակվել են 17 գիտական հոդվածներում:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, **Արփինե Սանասարի Հակոբյանի «Ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործման ուղիները կառավարչական հաշվառման համակարգում (ՀՀ առևտրային կազմակերպությունների նյութերով)»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ **Արփինե Սանասարի Հակոբյանը** արժանի է տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը՝ **Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
Վալլեքս գրուպ ՓԲԸ
Ֆինանսական բաժնի պետ, գլխավոր հաշվապահ
տ.գ.թ., դոցենտ՝ **Մուշեղ Գևորգի Հովհաննիսյան**

Մ.Գ.Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Վալլեքս գրուպ ՓԲԸ
Փոխնախագահ
Սահակ Սարգսի Կարապետյան

25.08.2025թ.